ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԼԵՌՆԱՆԻՍՏ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԽՄԵԼՈՒ ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ՆԱԽԱԳԾԱՆԱԽԱՀԱՇՎԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԿԱԶՄՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄ

Պայմանագիր № ԿՄՀՔ-ՀԲԽԾՁԲ-25/43

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՆԱԽԱԳԻԾ

ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԼԵՌՆԱՆԻՍՏ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԽՄԵԼՈՒ ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ

ԳԻՐՔ 1 ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳԾԱԳՐԵՐ

Ինվ № 250601 .

Ք. Երևան,
Նոյեմբեր, 2025թ.

ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԼԵՌՆԱՆԻՍՏ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԽՄԵԼՈՒ ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ՆԱԽԱԳԾԱՆԱԽԱՀԱՇՎԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԿԱԶՄՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄ

Պայմանագիր № ԿՄՀՔ-ՀԲԽԾՁԲ-25/43

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՆԱԽԱԳԻԾ

ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԼԵՌՆԱՆԻՍՏ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԽՄԵԼՈՒ ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ

ԳԻՐՔ 1 ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳԾԱԳՐԵՐ

Տնօրեն Է. Մեսրոպյան

Նախագծի գլխավոր ինժեներ Ա. Դավթյան

ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԼԵՌՆԱՆԻՍՏ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԽՄԵԼՈՒ ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՆԱԽԱԳԻԾ

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՆԱԽԱԳԾԻ ԿԱԶՄԸ

Գիրք 1	-	Ընդհանուր դրույթներ եվ աշխատանքային գծագրեր
Գիրք 2	-	Շինարարական աշխատանքների կազմակերպում
Գիրք 3.1	-	Աշխատանքային ծավալներ *Ծավալաթերթ-նախահաշիվ*
Գիրք 3.2	-	Աշխատանքային ծավալներ *Մրցութային ծավալաթերթ*
Գիրք 4	-	Նախահաշիվներ

ԳԻՐՔ – 1

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ընդհանուր դրույթներ

- Հրազդան համայնքի Լեռնանիստ բնակավայրերի խմելու ջրամատակարարման համակարգի բարելավման աշխատանքների կատարման տեխնիկական բնութագիր առ. 28.08.2025 հավելված 1
- ՀՀ Կոտայքի մարզ Հրազդան համայնքի Լեռնանսիտ բնակավայրի ճարտարապետահատակագծային առաջադրանք .
- ՋԻՆՋ ՍՊԸ նամակը Հրազդան համայնքի ղեկավարին թիվ ԷՄ-112, առ 24.09.2025թ. Լեռնանիստ բնակավայրի բնակչության թվի, տնային տնտեսությունների թվաքանակի, ավելցուկային գրունտների տեղափոխման թափոնակույտերի և փափուկ գրունտի բերման տարածքների վերաբերյալ:
- Հրազդանի համայնքապետարանի պատասխան նամակը N3638 առ 15.10.2025թ.
- Հրազդանի համայնքապետարանի պատասխան նամակը N1450 առ 25.09.2025թ.
- Հրազդանի համայնքապետարանի պատասխան նամակը N1517 առ 14.10.2025թ.
- Հրազդանի համայնքապետարանի պատասխան նամակը N1643 առ 31.10.2025թ.
- ՋԻՆՋ ՍՊԸ նամակը Հրազդան համայնքի ղեկավարին թիվ ԷՄ-127, առ 14.10.2025թ. համապատասխան կառուցվածքների սանիտարական գոտիների և ցանկապատերի հողհատկացման վերաբերյալ:
- Հրազդանի համայնքապետարանի պատասխան նամակը N3793 առ 24.10.2025թ.
- ՋԻՆՋ ՍՊԸ նամակը Հրազդան համայնքի ղեկավարին թիվ ԷՄ-129, առ 16.10.2025թ. Լեռնանիստ բնակավայերի նախագծվող քլորակայանի էլ. սնուցման համար էլեկտրամատակարարման տեխնիկական պայմանի ձեռքբերման վերաբերյալ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

- ՀՀ Կոտայքի մարզի Հրազդան համայնքի Լեռնանիստ բնակավայրի գոյություն ունեցող ՕԿՋ-ի կրող կոնստրուկցիաների տեխնիկական վիճակի վերաբերյալ

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

- ՀՀ Կոտայքի մարզի Հրազդան համայնքի Լեռնանիստ բնակավայրի ջրամատակարարման համակարգի (խորքային հոր, ՕԿՋ և բաշխիչ ցանց) տարածքի ինժեներա-երկրաբանական պայմանների մասին

Բացատրական մաս

Ընդհանուր բացատրագիր

Հիդրավլիկ մոդելավորում

Գծագրական մաս

Բաժին I	**ԱՐՏԱՔԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ**
Թերթ ՋՋ-I-1	*Խորքային հոր: Լեռնանիստ բնակավայրի գոյություն ունեցող խորքային հորի տարածքի գլխավոր հատակագիծ Մ 1:100*

Թերթ ՋՋ-Ի -2	Խորքային հոր: Լեռնանիստ բնակավայրի գոյություն ունեցող խորքային հորի նախագծվող տնակի տարածքի գլխավոր հատակագիծ Մ 1:100
Թերթ ՋՋ-Ի -3	Խորքային հոր: Լեռնանիստ բնակավայրի գոյություն ունեցող խորքային հորի նախագծվող տնակի հատակագիծ կտրվածք 1-1 Մ1:50, հանգույց Բ
Թերթ ՋՋ-Ի -4	Խորքային հոր: Լեռնանիստ բնակավայրի խորքային հորի տնակի հանգույց Ա Մ1:20, մասնագիր
Թերթ ՋՋ-Ի -5	ՕԿՋ վերանորոգում: Լեռնանիստ բնակավայրի գոյություն ունեցող ՕԿՋ-ի տարածքի գլխավոր հատակագիծ Մ 1:200
Թերթ ՋՋ-Ի -6	ՕԿՋ վերանորոգում: Հատակագիծ ՝0.00 նիշում: Ծածկի հատակագիծ: Կտրվածքներ: (Չափագրություն):
Թերթ ՋՋ-Ի -7	ՕԿՋ վերանորոգում: Լեռնանիստ բնակավայրի գոյություն ունեցող վերանորոգվող ՕԿՋ-ի և նախագծվող քլորակայանի տարածքի գլխավոր հատակագիծ Մ 1:200
Թերթ ՋՋ-Ի -8	ՕԿՋ վերանորոգում: Լեռնանիստ բնակավայրի գոյություն ունեցող վերանորոգվող 1x550մ³ ՕԿՋ-ի հատակագիծ Մ 1:50, հանգույց Ա
Թերթ ՋՋ-Ի -9	Վերանորոգվող 1x550մ³ ՕԿՋ-ի և նախագծվող չոր խցի կտրվածք 1-1 Մ 1:50, լայնական կտրվածքներ
Թերթ ՋՋ-Ի -10	Վերանորոգվող 1x550մ³ ՕԿՋ-ի և նախագծվող չոր խցի կտրվածքներ 2-2, 3-3, 4-4 Մ 1:50, քլորաջրի լուծույթի սրսկիչ հանգույց
Թերթ ՋՋ-Ի -11	Նախագծվող չոր խցի հատակագիծ, կտրվածք 1-1 Մ 1:50
Թերթ ՋՋ-Ի -12	Վերանորոգվող 1x550մ³ ՕԿՋ-ի և նախագծվող չոր խցի մասնագիր,հանգույցներ Հ-1, Հ-2, Հ-3
Թերթ ՋՋ-Ի -13	Նախագծվող քլորակայանի հատակագիծ, Մ 1:50, դոզավորող սարքավորման տեղակայման տիպային սխեմա, մասնագիր
Թերթ ՋՋ-Ի -14	Նախագծվող քլորակայանի և ջրահեռացման կուտակման հորի կտրվածքներ Մ 1:50
Թերթ ՋՋ-Ի -15	Նախագծվող քլորակայանի հանգույցներ «1» և «2», քլորաջրի լուծույթի տրման և դեպի քլորակայան մաքուր ջրի տրման խողովակների խրամուղու լայնական կտրվածքներ, մասնագիր
Թերթ ԵԲԿ-Ի -1	Խորքային հոր: Անվանացանկ: Բացատրագիր
Թերթ ԵԲԿ-Ի -2	Խորքային հոր: Ճակատ Ա առանցքով, Ճակատ 2 առանցքով, Շվաքարան Շ-1 հատակագիծ, Կտրվածք 1-1
Թերթ ԵԲԿ-Ի -3	Խորքային հոր: Հիմքի և ծածկի միաձույլ սալի ամրանավորման հատակագիծ, Կտրվածքներ 1-1÷6-6, ՄՀ-1
Թերթ ԵԲԿ-Ի -4	Խորքային հոր: ±0.00 նիշի հատակագիծ, Կտրվածքներ 1-1, 2-2
Թերթ ԵԲԿ-Ի -5	Խորքային հոր: Մասնագիր:
Թերթ ԵԲԿ-Ի -6	Խորքային հոր: Մետաղական դուռ ՄԴ-1, մասնագիր
Թերթ ԵԲԿ-Ի -7	ՕԿՋ վերանորոգում: Անվանացանկ: Բացատրագիր
Թերթ ԵԲԿ-Ի -8	ՕԿՋ վերանորոգում: Հատակագիծ ±0.00 նիշում: Ծածկի հատակագիծ: Կտրվածքներ: (Չափագրություն)
Թերթ ԵԲԿ-Ի -9	ՕԿՋ վերանորոգում: Հատակագիծ +0.15 նիշում: Ծածկի հատակագիծ: Հավ. ե/բ մտոցների հիմնակմաղքի նախագիծ: Խողովակի պատի հետ ամրացման հանգույց: Մասնագիր

Թերթ ԵԲԿ-Ի -10	ՕԿՋ վերանորոգում: Հատակի բետոնե սալի և պատերի տորկրետբետոնե շապիկով ջրամեկուսացման հանգույց: ՕԿՋ-ի պատում պատյան խողովակի բացվածքի ուժեղացման հանգույց: Պատյան խողովակ: Մասնագիր
Թերթ ԵԲԿ-Ի -11	ՕԿՋ վերանորոգում: Հավաքովի ե/բ մտոց ՀՄ-1: Մետաղական դռնակ ՄԴ-1: Մետաղական ելարան ՄԵ-1: Ներդիր դետալ: Կտրվածքներ: Մասնագիր:
Թերթ ԵԲԿ-Ի -12	Ջոր խուց: Ուղղանկյուն կտրվածքի ե/բ միաձույլ հոր (2.5 x 1.5 x 3.0)
Թերթ ԵԲԿ-Ի -13	Ջոր խուց: Ուղղանկյուն կտրվածքի (2.5 x 1.5 x 3.0) միաձույլ ե/բ հորի ծածկի սալ, մասնագիր
Թերթ ԵԲԿ-Ի -14	Ջոր խուց: Հավաքովի ե/բ մտոց ՀՄ-1: Մտոցի մետաղական դռնակ ՄԴ-1: Մետաղական ելարան ՄԵ-1: Մասնագիր
Թերթ ԵԲԿ-Ի -15	Քլորակայան: Անվանացանկ: Բացատրագիր
Թերթ ԵԲԿ-Ի -16	Քլորակայան: Հատակագիծ ±0.00 նիշում: Ճակատ Ա և 2 առանցքներով
Թերթ ԵԲԿ-Ի -17	Քլորակայան: Կտրվածքներ: Շվաքարան: Ներդիր դետալ: Մասնագիր
Թերթ ԵԲԿ-Ի -18	Քլորակայան: Հիմքի հատակագիծ: Հատակագիծ ±0.00 նիշում: Ծածկի միաձույլ ե/բ սալի ամրանավորում: Կտրվածքներ: Մասանգիր
Թերթ ԵԲԿ-Ի -19	Քլորակայան: Կտրվածքներ: Մասնագիր
Թերթ ԵԲԿ-Ի -20	Քլորակայան: Մետաղական դռնՄԴ-1: Պատուհանի ճաղավանդակ: Փայտե տակդիր: Մասնագիր
Թերթ ԵԲԿ-Ի -21	Ջրահեռացման կուտակման հոր: Հատակագիծ ±0.00 նիշում: Ծածկի հատակագիծ: Կտրվածք: Մասնագիր:
Թերթ ԵԲԿ-Ի -22	Ջրահեռացման կուտակման հոր: Ծածկի հավաքովի ե/բ ԾՍ-1 սալ: Ծածկի սալի ամրանավորում: Պատյան խողովակ: Ներդիր դետալ: Օդափոխության խողովակ: Մանագիր:
Թերթ ԵԲԿ-Ի -23	Ջրահեռացման կուտակման հոր: Հավաքովի ե/բ մտոց ՄՄ-1: Մետաղական դռնակ ՄԴ-1: Ներդիր դետալներ: Կտրվածք: Մասնագիր:
Թերթ ԷՄ-Ի -1	Խորքային հոր: Ընդհանուր տվյալներ
Թերթ ԷՄ-Ի -2	Խորքային հոր: Մասնագիր
Թերթ ԷՄ-Ի -3	Խորքային հոր: Հաշվարկային մոնտաժային սխեմա (գլխավոր բաշխիչ վահան)
Թերթ ԷՄ-Ի -4	Խորքային հոր: Էլեկտրամատակարարում 0.4ԿՎ ցանց: Հատակագիծ Մ 1:100
Թերթ ԷՄ-Ի -5	Խորքային հոր: Հատակագիծ Մ1:50: Էլեկտրաուժային սարքավորումներ: Էլեկտրական լուսավորություն
Թերթ ԷՄ-Ի -6	Քլորակայան: Ընդհանուր տվյալներ:
Թերթ ԷՄ-Ի -7	Քլորակայան: Մասնագրեր:
Թերթ ԷՄ-Ի -8	Քլորակայան: Հաշվարկային մոնտաժային սխեմա (Ներանցումային - բաշխիչ վահանակ):
Թերթ ԷՄ-Ի -9	Քլորակայան: Ջոր խցի պոմպի էլեկտրամատակարարում: Հատակագիծ Մ 1:200
Թերթ ԷՄ-Ի -10	Քլորակայան: Հատակագիծ Մ 1:50: Էլեկտրական լուսավորություն: Վարդակային ցանց

Թերթ ՄՅ-Ի -1	*Լեռնանիստ բնակավայրի խորքային հորի գոյություն ունեցող սանիտարական գոտու մետաղական ցանցահատվածներով ցանկապատի փշալարի դրվագ, մասնագիր*
Թերթ ՄՅ-Ի -2	*Լեռնանիստ բնակավայրի վերանորոգվող ՕԿՋ-ի գոյություն ունեցող և նախագծվող սանիտարական գոտու մետաղական ցանցահատվածներով ցանկապատի տեղակայման տարածքի գլխավոր հատակագիծ Մ 1:200*
Թերթ ՄՅ-Ի -3	*Լեռնանիստ բնակավայրի վերանորոգվող ՕԿՋ-ի սանիտարական գոտու մետաղական ցանցահատվածներով ցանկապատի դրվագ, մասնագիր*
Թերթ ՄՅ-Ի -4	*Վերանորոգվող ՕԿՋ-ի սանիտարական գոտու մետաղական ցանցահատվածներով դարպասի և դռան դրվագներ, մասնագիր*
Բաժին II	**ԲԱՇԽԻՉ ՅԱՆՑ**
Թերթ ԳՀ-II-1	*Լեռնանիստ բնակավայրի գոյություն ունեցող և նախագծվող ջրամատակարարման բաշխիչ ցանցի գլխավոր հատակագիծ Մ 1:3000*
Թերթ ՋՋ-II-1	*Նախագծվող ջրագիծ W_1-ի ուղեգծի հատակագիծ Մ 1:1000, լայնական կտրվածք, մասնագիր*
Թերթ ՋՋ-II -2	*Նախագծվող ջրագծեր W_2, W_3-ի ուղեգծերի հատակագիծ Մ1:1000, հանգույց Հ-1, լայնական կտրվածքներ, մասնագրեր*
Թերթ ՋՋ-II -3	*Նախագծվող ջրագծեր W_4, W_5-ի ուղեգծերի հատակագիծ Մ1:1000, լայնական կտրվածքներ, մասնագիր*
Թերթ ՋՋ-II -4	*Նախագծվող ջրագծեր W_4, W_5-ի լայնական կտրվածքներ, մասնագրեր*
Թերթ ՋՋ-II -5	*Նախագծվող ջրագծեր W_6, W_7-ի ուղեգծերի հատակագիծ Մ1:1000, հանգույց Հ-2 և մասնագրեր*
Թերթ ՋՋ-II -6	*Նախագծվող ջրագծեր W_6, W_7-ի լայնական կտրվածքներ*
Թերթ ՋՋ-II -7	*Նախագծվող ջրագծեր W_8, W_9-ի ուղեգծերի հատակագիծ Մ1:1000, լայնական կտրվածքներ, մասնագրեր*
Թերթ ՋՋ-II -8	*Նախագծվող ջրագծեր W_{10}-ի ուղեգծի հատակագիծ Մ1:1000, լայնական կտրվածք, մասնագիր*
Թերթ ՋՋ-II -9	*Նախագծվող ջրագծեր W_{11}-ի ուղեգծի հատակագիծ Մ1:1000, լայնական կտրվածք, մասնագիր*
Թերթ ՋՋ-II -10	*Նախագծվող ճնշման կարգավորիչ փականային հորեր ՃԿՓՀ-1; ՃԿՓՀ-2; ՃԿՓՀ-3-ի սխեմատիկ հատակագծեր Մ1:50, հանգույց «Գ»*
Թերթ ՋՋ-II -11	*Նախագծվող ճնշման կարգավորիչ փականային հորեր ՃԿՓՀ-4; ՃԿՓՀ-5; ՃԿՓՀ-6; ՃԿՓՀ-7-ի սխեմատիկ հատակագծեր Մ1:50*
Թերթ ՋՋ-II -12	*Նախագծվող ճնշման կարգավորիչ փականային հորեր ՃԿՓՀ-8; ՃԿՓՀ-9-ի սխեմատիկ հատակագծեր Մ1:50, հանգույցներ «Ա», «Բ»*
Թերթ ՋՋ-II -13	*Նախագծվող ճնշման կարգավորիչ փականային հորեր ՃԿՓՀ-1 ÷ ՃԿՓՀ-9-ի մասնագրեր*
Թերթ ՋՋ-II -14	*Նախագծվող օդահեռ հորեր ՕՀ-1; ՕՀ-2; ՕՀ-3-ի սխեմատիկ հատակագծեր Մ1:50*
Թերթ ՋՋ-II -15	*Նախագծվող օդահեռ հորեր ՕՀ-1; ՕՀ-2; ՕՀ-3-ի մասնագրեր, նախագծվող ջրամատակարարման փականային հոր ՋՓՀ-1-ի սխեմատիկ հատակագիծ Մ1:50, մասնագիր*
Թերթ ՋՋ-II -16	*Նախագծվող թողարկ հորեր ԹՀ-1; ԹՀ-2-ի սխեմատիկ հատակագծեր Մ1:50,*

	մասնագիր
Թերթ ՋՋ-II -17	*Նախագծվող հրշեջ հիդրանտի հորեր ՀՀ-1, ՀՀ-2, ՀՀ-4, ՀՀ-5-ի հատակագիծ Մ1:25, կտրվածք 1-1, մասնագիր*
Թերթ ՋՋ-II -18	*Նախագծվող հրշեջ հիդրանտի հոր ՀՀ-3-ի հատակագիծ Մ1:25, կտրվածք 1-1, մասնագիր*
Թերթ ՋՋ-II -19	*Լեռնանիստ բնակավայրի մասնավոր տների և հասարակական նշանակության օբյեկտների մուտքագծերի իրականացման տարբերակային լուծումների սխեմատիկ հատակագծեր (տարբերակ I-V)*
Թերթ ՋՋ-II -20	*Լեռնանիստ բնակավայրի մասնավոր տների և հասարակական նշանակության օբյեկտների մուտքագծերի իրականացման տարբերակային լուծումների սխեմատիկ հատակագծեր (տարբերակ VI-XII)*
Թերթ ՋՋ-II -21	*Մասնավոր տների և հասարակական նշանակության օբյեկտների մուտքագծերի խրամուղիների մշակման երկայնական և լայնական կտրվածքներ*
Թերթ ՋՋ-II -22	*Մասնավոր տների և հասարակական նշանակության օբյեկտների մուտքագծերի մասնագրեր*
Թերթ ՋՋ-II -23	*Պոլիմերավազային հորում սարքավորումների և ձևավոր մասերի մոնտաժման սխեմաներ, հատակագծեր, կտրվածքներ, մասնագիր*
Թերթ ՋՋ-II -24	*D=1.5մ, H=1.5մ ե/բ հորում DN50 տրամագծի ջրաչափի և D=0.9մ, H=1.35մ պոլիմերավազային հորում DN40/DN32 տրամագծի ջրաչափերի և ձևավոր մասերի մոնտաժման սխեմաներ, մասնագրեր*
Թերթ ՋՋ-II-25	*Կցաշուրթային ճկուն ներդիրների մոնտաժային սխեմա*
Թերթ ՋՋ-II -26	*Ջրամատակարարման կլոր հորերում մոնտաժվող սարքերի, սարքավորումների ընդհանուր մոնտաժային սխեմա*
Թերթ ՋՋ-II -27	*Պոլիմերավազային ջրաչափական հորի չափագրական գծագրեր և տեխնիկական ցուցանիշների աղյուսակ*
Թերթ ԵՔԿ-II -1	*Ջրամատակարարման Ե/Բ կլոր հորեր D=2.0 մ, $H_{հաշվ}$=1.5մ*
Թերթ ԵՔԿ-II -2	*Ջրամատակարարման Ե/Բ կլոր հորեր D=1.5 մ, $H_{հաշվ}$=1.5մ*
Թերթ ԵՔԿ-II -3	*Ջրամատակարարման Ե/Բ կլոր հորեր D=1.0 մ, $H_{հաշվ}$=1.5մ*
Թերթ ԵՔԿ-II -4	*Հրշեջ հիդրանտի Ե/Բ կլոր հորեր D=1.5 մ, $H_{հաշվ}$=1.5մ*
Թերթ ԵՔԿ-II -5	*Հիդրանտի հորի ծածկի հատակագիծ: Ծածկի սալի ամրանավորում: Մասնագիր*
Թերթ ԵՔԿ-II -6	*Ջրամատակարարման պոլիմերավազային կլոր հորեր D=0.9 մ, H/հաշվ=1.35մ*

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հավելված N 1
ԿՄՀՔ-ՀԲԽԾՁԲ-25/43 ծածկագրով
Հրատապ բաց խորհրդատվական մրցույթի հրավերի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Ծառայության								
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	Անվանում	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատուցման	
							հասցեն	ժամկետը
1	71241200/503	Նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման և մշակման խորհրդատվական ծառայություններ	տեխնիկական բնութագիրը նեկայացվում է ստորև	դրամ	[redacted]	1	ՀՀ ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ, 1 վարչական շենք	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 45 օրացուցային օր և 10 օր հայտնաբերված թերությունների շտկման համար

1	Կատարման ենթակա (նախատեսվող) աշխատանքների համառոտ բնութագիրը	Լեռնանիստ բնակավայրի համար անհրաժեշտ է. ✓ գոյություն ունեցող ՕԿՋ-ի և փականային կարգավորող հանգույցի վերակառուցում ✓ նոր քլորակայանի կառուցում, ✓ բաշխիչ ցանցի կառուցում, ✓ անհատական տնային միացումների կառուցում, ✓ էլեկտրամատակարարման համակարգի կառուցում: **Ներկայացվող հիմնական պահանջներ, տեխնիկական առաջադրանք** 1. Գոյություն ունեցող ե/բետոնե ՕԿՋ-ի կառույցի և խողովակաշարային համակարգի ինժեներական ուսումնասիրում, թերությունների վերհանում, տեխնիկական վիճակի եզրակացության և բարելավման հիմնավոր առաջարկության պատրաստում և ներկայացում խողովակաշարային համակարգի ինժեներական ուսումնասիրում, թերությունների վերհանում, տեխնիկական վիճակի եզրակացության և բարելավման հիմնավոր առաջարկության պատրաստում և ներկայացում: 2. ՕԿՋ-ին կից փականային հանգույցի՝ «չոր խցի» ուսումնասիրում, տեխնիկական վիճակի եզրակացության և բարելավման առաջարկության պատրաստում և ներկայացում, 3. Քլորակայանի տեղի ընտրություն, համաձայնեցում, նախագծի մշակում, 4. Բաշխիչ ցանցի հիդրավլիկ մոդելավորում, անհրաժեշտության դեպքում գոտիավորում, ջրագծերի և տեխնոլոգիական հանգույցների (փականային կարգավորող, հրշեջ հիդրանտի, ճնշման կարգավորման հորեր) նախագծում, 5. Մոտ 600 անհատական տնային միացումների և ջրաչափական հորերի նախագծում: ***Հիմնական պարտականություններ՝*** 1.հետազննման աշխատանքների իրականացում, 2.նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմում, ***Հետազննման վերաբերյալ պահանջներ՝*** •հետազննումն իրականացնել նախագծային փաստաթղթերը մշակելու անհրաժեշտ ծավալով, •հետազննման արդյունքում ներկայացնել կառույցների և ջրագծերի առկա տեխնիկական վիճակի եզրակացություն և բարելավման առաջարկություն: ***Նախագծի նկատմամբ պահանջներ*** • Նախագծային փաստաթղթերը պետք է համապատասխանեն ՀՀ պետական ստանդարտներին, հրահանգներին, քաղաքաշինական նորմերին ու կանոններին, • Նախագծային փաթեթը պետք է ներառի նաև. ✓ **Նախագծային լուծումների, շինարարական աղբի և փափուկ գրունտի տեղափոխման համաձայնեցումները տեղական ինքնակառավարման մարմնի ղեկավարի հետ:**
2	Նախագծման հիմնավորում և նորմատիվային պահանջներ	**Նախագծման համար հիմք հանդիսացող փաստաթղթեր՝ ելակետային տվյալներ** ճարտարապետահատակագծային առաջադրանք (-ներ) և տեխնիկական պայմաններ,

		նախագծային առաջադրանք (կազմվում է ընտրված Նախագծողի և Պատվիրատուի համատեղ մասնակցությամբ և հաստատմամբ), չափագրություններ, Ճարտարապետահատակագծային և նախագծային առաջադրանքներում ներառման ենթակա են ՀՀ կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N596-Ն որոշմամբ նախատեսված հիմնական պահանջները **Նախագծի մշակում ըստ նորմատիվային պահանջների՝** <Քաղաքաշինության մասին> օրենք <Քաղաքացիական պաշտպանության մասին> օրենք ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2022 թվականի հունիսի 22-ի «ՀՀՇՆ 30-02-2022 «Տարածքի բարեկարգում» Հայաստանի Հանրապետության շինարարական նորմերը հաստատելու և Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2022 թվականի հունիսի 14-ի N 11-ն հրամանում փոփոխություն կատարելու մասին» **N 12-Ն հրաման,**
3	Նախագծման փուլերը	**Նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմը և բովանդակությունը սահմանող կանոնների ապահովում՝** ՀՀ քաղաքաշինության նախարարի 11.09.2017թ N 128-Ն հրամանի համաձայն Նախագծային ծառայությունների իրականացում **«Նախագիծ»** փուլով (այդ թվում՝ **Էսքիզային նախագիծ՝** ծավալատարածական և ճարտարապետահատակագծային լուծումները պատվիրատուի և իրավասու մարմնի հետ նախապես համաձայնեցնելու նպատակով)
4	Նախագծի կազմը	**«Նախագիծ» փաթեթի լրակազմում ընդգրկվող (մշակվող) փաստաթղթեր** **Ընդհանուր բացատրագիր** **Հողամասի հատակագծային կազմակերպման ուրվագիծ** (կամ հողամասի գլխավոր հատակագիծ) **Ճարտարապետաշինարարական մաս** Ծավալահատակագծային լուծումներ, մասնագրեր և հանգույցներ Շինմոնտաժային աշխատանքների նախահաշիվ Շինարարության կազմակերպման նախագիծ Շրջակա միջավայրի պահպանմանն ուղղված միջոցառումներ *Նախագծի համաձայնեցում* **Համայնքի ղեկավարի,** Ինժեներական ցանցերը շահագործող և այլ շահագրգիռ կազմակերպությունների հետ
5	Այլ պահանջներ	***Եզրակացություններ*** Նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման ծառայությունների համար հատկացված ֆինանսական միջոցների շրջանակներում **Նախագծողի կողմից** գոյություն ունեցող շենքի տեխնիկական վիճակի ուսումնասիրության եզրակացությունների ձեռքբերում, և նախագծային լուծումների ընտրության տեխնիկատնտեսական հիմնավորում **Շինարարական նյութերի, պատրաստվածքների (շահագործման) նկատմամբ պահանջներ** նյութերի, պատրաստվածքների շահագործման առավելագույն ժամկետ, նորագույն տեխնոլոգիաների կիրառմամբ արտադրված նյութերի, պատրաստվածքների ցանկ, Նախագծում օգտագործվող շինարարական նյութերի, պատրաստվածքների հատկանիշների մանրամասն և սպառիչ նկարագրում-բնութագրում՝ նախագծի մասնագրերում և նախահաշվում՝ նշելով տվյալ ապրանքը բնութագրող հիմնական տեխնիկական ցուցանիշները:

		ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ Տեղական արտադրության և Հայաստան ներմուծվող շինանյութերի օգտագործում **ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՆԱԽԱԳԾԻ ԼՐԱԿԱԶՄ** Նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակում համակարգչային ծրագրով: Նախագծանախահաշվային փաստաթղթերի /տեքստային և գծագրական նյութերի, նախահաշվի/ ամբողջական փաթեթի ներկայացում 4 օրինակ:
6	Աշխատանքների տևողություն և ֆինանսավորում	**ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԺԱՄԿԵՏ (ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆ)** Ծառայությունների մատուցման ժամանակահատվածը նախատեսել պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից՝ 45 օրացուցային օր: 45 օրացուցային օրը չի ներառում Պատվիրատուին վերապահված ընթացակարգերի ապահովման ժամանակահատվածը: **ՆԱԽԱԳԾԻ ԼՐԱՄՇԱԿՈՒՄ** Նախագծանախահաշվային փաստաթղթերի լրամշակումն իրականացվում է առանց ֆինանսական փոխհատուցման՝ առավելագույնը 10-օրյա ժամկետում:

* Էլ կրիչով պետք է ներկայացվեն
նախահաշիվը և ծավալաթերթը՝ PDF և Excell տարբերակներով,
նախագիծը՝ PDF և Cad տարբերակներով:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Հրազդանի համայնքապետարան
Հասցե՝ ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ
1 վարչական շենք
Բանկ՝ Հրազդանի ՏԳԲ
ՀՀ 900122001747
ՀՎՀՀ 03027114
Ս. Միքայելյան

(ստորագրություն)

Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
ՋԻՆՋ ՍՊԸ
Հասցե՝ ք. Երևան, Քանաքեռի 11, տ.57

Բանկ՝ ԱՐԴՇԻՆԲԱՆԿ ՓԲԸ
ՀՀ 2481101806220033
ՀՎՀՀ 02511015
Է. Մեսրոպյան

(ստորագրություն)

Կ.Տ.

ՋԻՆՋ
Ինժեներական խորհրդատվություն

Հայաստանի Հանրապետություն
0052, ք.Երևան, Քանաքեռ–Զեյթուն,
Քանաքեռի 11–րդ փող., տ. 57

Հեռ. +37411 24 60 23

Թիվ ԷՄ - 112 « 24 » սեպտեմբերի 2025թ.

ՀՀ Կոտայքի մարզի
Հրազդան համայնքի ղեկավար՝

պրն. Ս. Միքայելյանին

Հարգելի պարոն Միքայելյան

Հրազդանի համայնքապետարանի պատվերով, ՋԻՆՋ ՍՊԸ կողմից ԿՄԿՀՔ - ՀԲԽԾՁԲ-25/43 պայմանագրի շրջանակներում Լեռնանիստ բնակավայրի ջրամատակարարման համակարգի բարելավման աշխատանքային նախագծում ջրապահանջի հաշվարկման համար, խնդրում ենք տրամադրել փաստացի բնակվող և հաշվառված բնակչության թվերը:

Շինարարական մրցութային փաստաթղթերի մշակման և աշխատանքային ծավալների գնահատման համար խնդրում ենք տրամադրել նաև հետևյալ տվյալները՝

1. Անհատական տների և հասարարակական նշանակության օբյեկտերի մուտքագծերի և անհատական ջրաչափական հանգույցների իրականացման համար բաժանորդների թիվը,
2. Ավելցուկային գրունտների և շինարարական աղբի տեղափոխման թափոնակույտերի տարածքների, ինչպես նաև անհրաժեշտության դեպքում փափուկ գրունտի բերման տարածքների միջին հեռավորությունները բնակավայրից:

Հարգանքով

Է. Մեսրոպյան
տնօրեն

Կատարող՝ Ա. Դավթյան
տեխնիկական տնօրեն
Հեռ. (098)730555

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Կենտրոն, Սահմանադրության հրապարակ 1
Հեռ. (0223)2-23-45 հեռ./ֆաքս (060)704010
էլ. փոստ info@hrazdan.am
15 հոկտեմբեր 2025 թ. N 3638

ՋԻՆՋ ԻՆԺԵՆԵՐԱԿԱՆ
ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆ
ՏՆՕՐԵՆ Է. ՄԵՍՐՈՊՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Մեսրոպյան

Ի պատասխան Ձեր 2025 թվականի սեպտեմբերի 24-ի N ԷՄ-112 գրության՝ տրամադրում եմ Կոտայքի մարզի Հրազդան համայնքի Լեռնանիստ բնակավայրում անհատական տների և հասարակական նշանակության օբյեկտների մուտքագծերի և անհատական ջրաչափական հանգույցների իրականացման համար բաժանորդների թիվը:

Առդիր՝ 1 նիշք:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ ՍԵՎԱԿ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

Քաղաքաշինության և հողաշինության բաժնի պետ՝ Գուրգեն Հակոբյան
Կատարող՝ Լենա Հարությունյան, հեռ. 060-70-40-14

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հրազդան համայնք,
Հրազդան, Կենտրոն, Սահմանադրության հրապ. 1, Հեռ. (0223) 2-23-45, info@hrazdan.am

N **1450** 25 սեպտեմբեր 2025 թ.

Տրվում է այն մասին, որ Կոտայքի մարզի Հրազդան համայնքի Լեռնանիստ բնակավայրի անհատական տների և հասարակական նշանակության օբյեկտների մուտքագծերի և անհատական ջրաչափական հանգույցների իրականացման համար, բաժանորդների թիվը կազմում է 695 բաժանորդ;

Տրվում է ներկայացնելու ըստ պահանջի

ԼԵՌՆԱՆԻՍՏ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՂԵԿԱՎԱՐ Ռ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

QR կոդի միջոցով կարող եք սկուգել տեղեկանքի վավերականությունը համայնքապետարանի կառավարման տեղեկատվական համակարգում

Կատ. ԱՌԱՋԱՏԱՐ ՄԱՍՆԱԳԵՏ՝ Է. Հայրապետյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հրազդան համայնք,
Հրազդան, Կենտրոն, Սահմանադրության հրապ. 1, Հեռ. (0223) 2-23-45, info@hrazdan.am

N **1517** 14 հոկտեմբեր 2025 թ.

ՏԵՂԵԿԱՆՔ

ՀՀ Կոտայքի մարզի, Հրազդան համայնքի, Լեռնանիստ բնակավայրի ջրամատակարարման համակարգի բարելավման աշխատանքների համար

Հողային աշխատանքներն իրականացնելու համար ներկայացվում է պահուստների, գրունտների և շինարարական աղբի հեռավորությունները հիմնական շինարարական հրապարակից.
Մոտավոր ___4___ կմ հեռավորության վրա:
Շինարարական աղբի տեղը՝ մոտավոր մինչև 10 կմ հեռավորության վրա:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

QR կոդի միջոցով կարող եք ստուգել տեղեկանքի վավերականությունը համայնքապետարանի կառավարման տեղեկատվական համակարգում

Կատ. ԲԱԺՆԻ ՊԵՏ՝ Գ. Հակոբյան
+37460704014

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հրազդան համայնք,
Հրազդան, Կենտրոն, Սահմանադրության հրապ. 1, Հեռ. (0223) 2-23-45, info@hrazdan.am

N **1643** 31 հոկտեմբեր 2025 թ.

Ի լրումն 2025 թվականի սեպտեմբերի 25-ի թիվ 1450 տեղեկանքի տեղեկացնում ենք, որ Կոտայքի մարզի Հրազդան համայնքի Լեռնանիստ բնակավայրում հաշվառված են և բնակվում են թվով 3230 մարդ:

Տրվում է ներկայացնելու ըստ պահանջի

ԼԵՌՆԱՆԻՍՏ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՂԵԿԱՎԱՐ Ռ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

QR կոդի միջոցով կարող եք ստուգել տեղեկանքի վավերականությունը համայնքապետարանի կառավարման տեղեկատվական համակարգում

Կատ. ԱՌԱՋԱՏԱՐ ՄԱՍՆԱԳԵՏ՝ Է. Հայրապետյան

ՋԻՆՋ
Ինժեներական խորհրդատվություն

Հայաստանի Հանրապետություն
0052, ք.Երևան, Քանաքեռ–Զեյթուն,
Քանաքեռի 11–րդ փող., տ. 57

Հեռ. +37411 24 60 23

Թիվ ԷՄ – 127 « 16 » հոկտեմբեր 2025թ.

ՀՀ Կոտայքի մարզի
Հրազդան համայնքի ղեկավար՝

պրն. Ս. Միքայելյանին

Հարգելի պարոն Միքայելյան

«ՀՀ Կոտայքի մարզի Հրազդան համայնքի Լեռնանիստ բնակավայրի խմելու ջրամատակարարման համակարգի բարելավման նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմում» պայմանագրի շրջանակներում մշակվող աշխատանքային նախագծով նախատեսվում է գոյություն ունեցող 1x530.0մ^3 ծավալով ՕԿՋ-ի վերանորոգում և այդ ՕԿՋ-ի հարևանությամբ նոր քլորակայանի ու չոր խցի կառուցում:

Քլորակայանը և չոր խուցը սանիտարական գոտում ներառելու համար անհրաժեշտ է վերանայել գոյություն ունեցող սանիտարական գոտու չափերը:

Կից գծագրական 1 թերթով Ձեզ ենք ներկայացնում Լեռնանիստ բնակավայրում գոյություն ունեցող վերանորոգվող 1x530.0մ^3 ՕԿՋ-ի և նախագծվող քլորակայանի տարածքի գլխավոր հատակագիծը (551.0 մ^2 մակերեսով) գոյություն ունեցող պահպանվող և նոր նախագծվող ցանկապատերի եզրագծերի շրջադարձային բեկման կետերի աշխարհագրական կոորդինատներով:

Խնդրում ենք Ձեր համաձայնությունը սան. գոտու ցանկապատի ավելացվող եզրագծերի և չափերի վերաբերյալ:

Միաժամանակ խնդրում ենք նաև սկսել համապատասխան գործընթաց՝ վերոնշյալ տարածքի հողհատկացման համար:

Հարգանքով

Է. Մեսրոպյան
տնօրեն

Կատարող՝ Ա. Դավթյան
տեխնիկական փնօրեն
Հեռ. (098)730555

ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ

- ԳՈՅՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԽՈՂՈՎԱԿՆԵՐ
- ՆԱԽԱԳԾՎՈՂ ԽՈՂՈՎԱԿՆԵՐ ԵՎ ՋՐԱՏԱՐԵՐ
- ԳՈՅՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ՊԱՀՊԱՆՎՈՂ ՄԵՏԱՂԱԿԱՆ ՑԱՆԿԱՊԱՏԻ ՀԱՏՎԱԾ
- ՆՈՐ ՆԱԽԱԳԾՎՈՂ ՄԵՏԱՂԱԿԱՆ ՑԱՆԿԱՊԱՏԻ ՀԱՏՎԱԾ

ՎԵՐԱՆՈՐՈԳՎՈՂ 1x530.0մ^3 ՕԿՋ-Ի ԵՎ ՆԱԽԱԳԾՎՈՂ ՔԼՈՐԱԿԱՅԱՆԻ ԳՈՅՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԵՎ ՆԱԽԱԳԾՎՈՂ ՑԱՆԿԱՊԱՏԻ ԾՐՋԱՊԱՏՄԱՆ ԱՆԿՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՈՐԴԻՆԱՏՆԵՐԻ ԱՂՅՈՒՍԱԿ

Հերթական համարները կետերի նկարագրության	ԿՈՈՐԴԻՆԱՏՆԵՐ	
	X	Y
1	4480851.6004	8483105.9914
2	4480851.8879	8483111.9845
3	4480852.9880	8483134.9110
4	4480836.5542	8483135.4139
5	4480834.7275	8483122.4196
6	4480832.7323	8483108.2268

Լեռնանիստ բնակավայր

Փոփոխություն	Ամիս/Ամսաթիվ	Դիտողություն	Հեղինակ	Ստուգեց

ՋՐՆՋ
Ինժեներական ենթակառուցվածքներ

ԵՐԵՎԱՆ 2025թ.

Ն.Գ.Ի.	Ա. Դավթյան	
Նախագծեց	Գ. Խաչատրյան	
Ստուգեց	Ռ. Բաղալովա	

Պատվիրատու՝ Հրազդանի Համայնքապետարան

Պայմանագիր՝ N ԿՄՀՋ-ՀԲԽԾՁՔ-25/43

ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԼԵՌՆԱՆԻՍՏ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԽՈՆԱՐԻ ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ՆԱԽԱԳԻԾ

Աշխատանքային նախագիծ

ԱՐՏԱՔԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ

Բաժին ՋՋ - I

Լեռնանիստ բնակավայրի վերանորոգվող 1x530մ^3 ՕԿՋ-ի և նախագծվող քլորակայանի տարածքի գլխավոր հատակագիծ Մ 1:200

թերք	թերքեր
1	1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Կենտրոն, Սահմանադրության հրապարակ 1
Հեռ. (0223)2-23-45 հեռ./ֆաքս (060)704010
էլ. փոստ info@hrazdan.am
24 հոկտեմբեր 2025 թ. N 3793

ՋԻՆՋ ԻՆԺԵՆԵՐԱԿԱՆ
ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆ
ՏՆՕՐԵՆ Է. ՄԵՍՐՈՊՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Մեսրոպյան

Ի պատասխան Ձեր 2025 թվականի հոկտեմբերի 16-ի N ԷՄ-127 գրության հայտնում եմ, որ նախագծով նախատեսվող քլորակայանի և չոր խցի կառուցման համար առաջարկվող տարածքի սահմանազատման, հողհատկացման վերաբերյալ առարկություններ չկան:

Առդիր՝ 1 նիշք:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ ՍԵՎԱԿ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

Քաղաքաշինության և հողաշինության բաժնի պետ՝ Գուրգեն Հակոբյան
Կատարող՝ Անդրանիկ Զաքարյան, հեռ. 060-70-40-14



ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ

- ԳՈՅՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԽՈՂՈՎԱԿՆԵՐ
- ՆԱԽԱԳԾՎՈՂ ԽՈՂՈՎԱԿՆԵՐ ԵՎ ՋՐԱՏԱՐԵՐ
- ԳՈՅՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ՊԱՀՊԱՆՎՈՂ ՄԵՏԱՂԱԿԱՆ ՃԱՆԿԱՊԱՏԻ ՀԱՏՎԱԾ
- ՆՈՐ ՆԱԽԱԳԾՎՈՂ ՄԵՏԱՂԱԿԱՆ ՃԱՆԿԱՊԱՏԻ ՀԱՏՎԱԾ

ՎԵՐԱՆՈՐՈԳՎՈՂ 1x530.0մ³ ՕԿՋ-Ի ԵՎ ՆԱԽԱԳԾՎՈՂ ՔԼՈՐԱԿԱՅԱՆԻ ԳՈՅՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԵՎ ՆԱԽԱԳԾՎՈՂ ՃԱՆԿԱՊԱՏԻ ՇՐՋԱՊԱՏԱՐԻ ԱՆԿՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՈՐԴԻՆԱՏՆԵՐԻ ԱՂՅՈՒՍԱԿ

Շրջապատման կետերի համարները	ԿՈՈՐԴԻՆԱՏՆԵՐ	
	X	Y
1	4480851.6004	8483105.9914
2	4480851.8879	8483111.9845
3	4480852.9880	8483134.9110
4	4480836.5542	8483135.4139
5	4480834.7275	8483122.4196
6	4480832.7323	8483108.2268

Լեռնաեիատ բնակավայր

Փոփոխություն	Ամիս/Ամսաթիվ	Դիտողություն	Հաղինակ	Ստուգեց

ՋԻՆՋ

ԵՐԵՎԱՆ 2025թ.

Ն.Գ.Ի.	Ա. Դավթյան	
Նախագծեց	Գ. Խաչատրյան	
Ստուգեց	Ի. Բադալովա	

Պատվիրատու: Հրազդանի Համայնքապետարան

Պայմանագիր: N ԿՄՀՋ-ՀԲԻՈԾՀՒ-25/43

ՀՀ ԱՐՏԱՔԻՆ ՄՍՐՁԻ ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԼԵՌՆԱՀԱՐԹ ՄԱՍԻ ԿԱՅԱՆԱՅԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՈՒՄ ՀԱՄՈՂՍՐԳԻ ԲԱՐԵԿԱՐՈՒՄԸ ՆԱԽԱԳԾՈՎ

Աշխատանքային նախագիծ

ԱՐՏԱՔԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ

Թաղիճ ՋՋ - I

Լեռնաեիատ բնակավայրի վերանորոգվող 1x530մ³ ՕԿՋ-ի և նախագծվող բլոկապատի տարածքի գլխավոր հատակագիծ Մ 1:200

թերթ	թերթեր
1	1

ՋԻՆՋ
Ինժեներական խորհրդատվություն

Հայաստանի Հանրապետություն
0052, ք.Երևան, Քանաքեռ–Զեյթուն,
Քանաքեռի 11–րդ փող., տ. 57

Հեռ. +37411 24 60 23

Թիվ ԷՄ – 129 « 16 » հոկտեմբերի 2025թ.

ՀՀ Կոտայքի մարզի
Հրազդան համայնքի ղեկավար՝

պրն. Ս. Միքայելյանին

Հարգելի պարոն Միքայելյան

«ՀՀ Կոտայքի մարզի Հրազդան համայնքի Լեռնանիստ բնակավայրի խմելու ջրամատակարարման համակարգի բարելավման նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմում» պայմանագրի շրջանակներում մշակվող աշխատանքային նախագծով նախատեսվում է գոյություն ունեցող 1x530.0մ^3 ծավալով ՕԿՋ-ի վերանորոգում և այդ ՕԿՋ-ի հարևանությամբ նոր քլորակայանի կառուցում:

Հետևաբար խնդրում ենք Ձեզ, Լեռնանիստ բնակավայրում կառուցվող քլորակայանի էլ. սնուցման նպատակով ՀԷՑ ՓԲԸ-ից ստանալ 3 կՎտ հզորությամբ՝ 220վ լարման էլեկտրամատակարարման տեխնիկական պայման:

Կից ներկայացնում ենք Լեռնանիստ բնակավայրի վերանորոգվող 1x530.0մ^3 ՕԿՋ-ի և կառուցվող քլորակայանի տարածքի տեղադիրքային հատակագիծը գծագրական մեկ թերթով:

Հարգանքով

Է. Մեսրոպյան
տնօրեն

Կատարող՝ Ա. Դավթյան
տեխնիկական տնօրեն
Հեռ. (098)730555

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Լեռնանիստ բնակավայրի գոյություն ունեցող ՕԿՋ-ի կրող կոնստրուկցիաների տեխնիկական վիճակի վերաբերյալ

Լեռնանիստ համայնքի ՕԿՋ-ի վերանորոգման աշխատանքային նախագծի մշակման համար տեղազննվել է գոյություն ունեցող, չշահագործվող ՕԿՋ-ի կրող կոնստրուկցիաների տեխնիկական վիճակը:

Լեռնանիստ համայնքի ՕԿՋ-ն կառուցվել է 1985 թ.:

Լեռնանիստ համայնքի ՕԿՋ-ն W=550մ^3 տարողությամբ հատակագծում ուղղանկյուն, 12,0 x 11,50 մ ներքին չափերով, H=4,0 մ բարձրությամբ ստորգետնյա կառույց է:

ՕԿՋ-ի պատերը իրականացված են հավաքովի ե/բ պատի սալերով:

ՕԿՋ-ի մեջտեղում տեղադրված է հավաքովի ե/բ սյուն, որի վրա հենված են հավաքովի ե/բ հեծանները:

Ծածկը իրականացված է հավաքովի ե/բ կողավոր ծածկի սալերով:

Պատերը ներսից սվաղված են ցեմենտավազային շաղախով:

Լեռնանիստ համայնքի ՕԿՋ-ի տարածքում գոյություն ունեցող կիսակառույց բետոնե պատերով, առանց ծածկի չոր խուցը վերանորոգման ենթակա չէ:

ՕԿՋ-ի կրող կոնստրուկցիաների ակնադիտական տեղազննմամբ արձանագրվում է հետևյալը՝

- ✓ ՕԿՋ-ի հատակին և պատերին վտանգավոր բնույթի ճաքեր չկան;
- ✓ ՕԿՋ-ի տեխնիկական վիճակը գնահատվում է բավարար: Նրա վնասվածությունը ըստ գործող շին. նորմերի գնահատվում է երկրորդ աստիճան;
- ✓ ՕԿՋ-ի գոյություն ունեցող հավաքովի ե/բ հեծանների հորիզոնական դիրքը ապահովելու համար դրանք հենված են ՕԿՋ-ի մեջտեղում տեղադրված սյան թևերի վրա մետաղական տարրերով;
- ✓ ՕԿՋ-ի պատերի ցեմենտավազային երեսասվաղը քայքայված է;
- ✓ ծածկի հավաքովի ե/բ սալերի կողերի, ինչպես նաև սալի հատվածի ամրանները տեղ-տեղ մերկացած են;
- ✓ ՕԿՋ-ի ծածկը ջրամեկուսացված է իզոգամով և պաշտպանից ցեմենտավազային շերտով:

Հաշվի առնելով վերը նշվածը առաջարկվում է՝

1. ՕԿՋ-ի հատակի և պատերի ջրանթափանցելիության պայմանի ապահովման համար, հատակը պատել B25 W6 դասի ե/բ սալով, իսկ պատերը՝ ամբողջ պարագծով ու բարձրությամբ պատել ամրանավորված B25 W6 դասի մանրահատիկ ճնշածեփված բետոնե շապիկով, ըստ հետևյալ տեխնիկական միջոցառումների հերթականության.

ա) հատակը և պատերը մաքրել ցեմենտավազային երեսասվաղի շերտից, հեռացնելով քայքայված և/կամ պոկված բետոնե բեկորները;

բ) շին. աղբը հեռացնելուց հետո մակերեսները թարմացնել ավազաշիթային եղանակով, կամ ատամնամուրճով;

գ) հատակի հետ ամրանացանցերի ամրացման համար 60սմ շախմատաձև քայլով գայլիկոնել անցքեր, ներարկել պոլիմերցեմենտային շաղախով և խարսխել ամրանացանցերի ամրացման համար ամրանաձողերը;

դ) պատերի հետ ամրանացանցերի ամրացման համար 60սմ շախմատաձև քայլով կրակել 10x100, L=100մմ շերտապողպատներ և եռակցել ամրանացանցերի ամրացման համար նախատեսված Φ10A240 դասի հորիզոնական ամրանաձողերը;

ե) ամրանային ցանցերը ամրացնել հատակին և պատերին այնպես, որ նրանք հատակի և պատերի մակերեսներից հեռու լինեն ոչ պակաս 20 մմ-ից;

զ) հատակի ե/բ սալի իրականացումից հետո կատարել պատերի ամրանավորված ճնշածեփված բետոնե շապիկի իրականացման աշխատանքները;

է) պատերի մակերեսները լվանալ ջրով և 2 ժամ հետո միայն իրականացնել 6 սմ հաստությամբ տորկրետբետոնե շապիկը, ապահովելով 2 սմ բետոնե պաշտպանիչ շերտի հաստություն և քսահարթել պատերի մակերեսները:

2. Հատակի բետոնի խտացումը իրականացնել մակերեսային թրթռահարթակներով կամ թրթռահեծանով:

3. Նախատեսել, նորմերով պահանջվող երկրորդ մտոցի կառուցումը:

4. Կողավոր սալերի մերկացած ամրանները մաքրել ժանգից և ջրամեկուսացնել հիդրոֆոբ նյութերով:

Վերը նշված բոլոր տեխնիկական միջոցառումները իրականացնել անհատական մշակված աշխատանքային նախագծերի հիման վրա:

Ճարտարագետ Հ. Մեսրոպյան

Ճարտարագետ Գ. Քարտաշյան

ՀՀ Կոտայքի մարզի Լեռնանիստ բնակավայրի ջրամատակարարման համակարգի (խորքային հոր, ՕԿՋ և բաշխիչ ցանց) տարածքի

ԻՆԺԵՆԵՐԱ-ԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

1. Ներածություն

Տարածքի ինժեներա-երկրաբանական և ջրաերկրաբանական պայմանները պարզաբանելու նպատակով իրականացվել են հետևյալ աշխատանքները՝

-Անցյալ տարիներին տարբեր նախագծա-հետազոտական և գիտա-հետազոտական կազմակերպությունների կողմից կատարված հետազոտական նյութերի հավաքում, վերլուծություն և ընդհանրացում,

-Հետազոտվող և հարակից տարածքների ինժեներա-երկրաբանական պայմանների տեղազննություն,

-Ֆոնդային և դաշտային փաստացի նյութերի կամերալ մշակում և սույն եզրակացության կազմում:

2. Ընդհանուր տեղեկություններ շրջանի մասին

Լեռնանիստի տարածքի կլիման ամառ՝ զով է, քամոտ, օպտիմալ խոնավությամբ, միջին ջերմաստիճանը հուլիսին 16°C, հարաբերական խոնավությունը (ժամը 15-ին)՝

45-60%, քամու միջին արագությունը՝ 3.0-6.0 մ/վ

Ձմեռ՝ շատ ցուրտ, քամոտ, խոնավ, միջին ջերմաստիճանը հունվարին՝ մինուս 5°C-ից մինչև մինուս 12°C, հարաբերական խոնավությունը (ժամը 15-ին)՝ 70% և ավելի, քամու միջին արագությունը՝ 5.0-7.0 մ/վ

Ձյան բարձրությունը՝ 132սմ:

Սառեցման առավելագույն խորությունը՝ 92սմ:

3. Գոյություն ունեցող խորքային հորի տարածք

0,0-2,5 - Խճամանրախճային գրունտ կավավազային լցոնով մշակման խումբը՝

50%--§6 г (աղ.1-1) IVկարգ

40%--§6д (աղ.1-1) Vկարգ

10%--§6е (աղ.1-1) VIկարգ

4. Գոյություն ունեցող ՕԿՋ-ի տարածք

0,0-3,0 Խճամանրախճային գրունտ ավազակավային լցոնով, մշակման խումբը՝

50%--§6 г (աղ.1-1) IVկարգ

50%--§6д (աղ.1-1) Vկարգ

5. Ջրամատակարարման բաշխիչ ցանց

5.1. Ջրագիծ թիվ 1(W₁)

Ջրագծի երկարությունը 96.0 մետր է: Ջրագիծը անցնում է հետևյալ գրունտներով՝

ՆԿ0+00 –ՆԿ 0+96

0,0-2,5 Խճամանրախճային գրունտ, կավավազային, ավազակավային լցոնով, մշակման խումբը՝

50%--§6 г (աղ.1-1) IVկարգ

50%--§6д (աղ.1-1) Vկարգ

5.2. Ջրագիծ թիվ 2(W₂)

Ջրագծի երկարությունը 150.0 մետր է: Ջրագիծը անցնում է հետևյալ գրունտներով՝

ՆԿ0+00 –ՆԿ 1+50

0,0-2,5 Ավազակավային գրունտ, խիճամանրախճային ներփակումներով 30-40%, մշակման խումբը՝

50%--§6 г (աղ.1-1) IVկարգ

35%--§6д (աղ.1-1) Vկարգ

10%--§6е (աղ.1-1) VIկարգ

5%--§19 (աղ.1-1) VII կարգ

5.3. Ջրագիծ թիվ 3(W₃)

Ջրագծի երկարությունը 74.0 մետր է: Ջրագիծը անցնում է հետևյալ գրունտներով՝

ՆԿ0+00 –ՆԿ 0+74

0,0-2,5 Ավազակավային գրունտ, խիճ-մանրախիճ, ներփակումներով, տեղ-տեղ բազալտե մեծաքարեր,մշակման խումբը՝

50%--§6 г (աղ.1-1) IVկարգ

35%--§6д (աղ.1-1) Vկարգ

10%--§6е (աղ.1-1) VIկարգ

5%--§19 (աղ.1-1) VII կարգ

5.4. Ջրագիծ թիվ 4(W₄)

Ջրագծի երկարությունը 50.0 մետր է: Ջրագիծը անցնում է հետևյալ գրունտներով՝

ՆԿ0+00 –ՆԿ 0+50

0,0-2,5 Ավազակավային գրունտ, խիճամանրախճային ներփակումներով, մշակման խումբը՝

40%--§6 г (աղ.1-1) IVկարգ

60%--§6д (աղ.1-1) Vկարգ

5.5. Ջրագիծ թիվ 5(W_5)

Ջրագծի երկարությունը 65.0 մետր է: Ջրագիծը անցնում է հետևյալ գրունտներով՝

ՆԿ0+00 –ՆԿ 0+65

0,0-2,5 Ավազակավեր, խճի, մանրախճի հետ 10-20%, մշակման խումբը՝

90%--§6 г (աղ.1-1) IVկարգ

10%--§6д (աղ.1-1) Vկարգ

5.6. Ջրագիծ թիվ 6 (W_6)

Ջրագծի երկարությունը 247.0 մետր է: Ջրագիծը անցնում է հետևյալ գրունտներով՝

ՆԿ0+00 –ՆԿ 1+20

0,0-2,5 Խճամանրախճային գրունտ ավազակավային լցոնով, մշակման խումբը՝

50%--§6 г (աղ.1-1) IVկարգ

50%--§6д (աղ.1-1) Vկարգ

ՆԿ 1+20 – ՆԿ 2+47

0,0-2,5 Բազալտներ, մեծաքարային անջատումներով, տեղ-տեղ բեկորային, մշակման խումբը՝

40%--§6д (աղ.1-1) Vկարգ

40%--§6е (աղ.1-1) VIկարգ

20%--§19 (աղ.1-1) VII կարգ

5.7. Ջրագիծ թիվ 7 (W_7)

Ջրագծի երկարությունը 25.0 մետր է: Ջրագիծը անցնում է հետևյալ գրունտներով՝

ՆԿ 0+00 – ՆԿ 0+25

0,0-2,5 Խճամանրախճային գրունտ ավազակավային լցոնով մշակման խումբը՝

50%--§6 г (աղ.1-1) IVկարգ

50%--§6д (աղ.1-1) Vկարգ

5.8. Ջրագիծ թիվ 8 (W_8)

Ջրագծի երկարությունը 65.0 մետր է: Ջրագիծը անցնում է հետևյալ գրունտներով՝

ՆԿ 0+00 – ՆԿ 0+65

0,0-2,5 Խճամանրախճային գրունտ ավազակավային լցոնով, մշակման խումբը՝

40%--§6 г (աղ.1-1) IVկարգ

60%--§6д (աղ.1-1) Vկարգ

5.9. Ջրագիծ թիվ 9 (W_9)

Ջրագծի երկարությունը 65.0 մետր է: Ջրագիծը անցնում է հետևյալ գրունտներով՝

ՆԿ 0+00 – ՆԿ 0+65

0,0-2,5 Խճամանրախճային գրունտ ավազակավային լցոնով, մշակման խումբը՝

40%--§6 г (աղ.1-1) IVկարգ

60%--§6д (աղ.1-1) Vկարգ

5.10. Ջրագիծ թիվ 10 (W_{10})

Ջրագծի երկարությունը 70.0 մետր է: Ջրագիծը անցնում է հետևյալ գրունտներով՝

ՆԿ 0+00 – ՆԿ 0+70

0,0-2,5 Կավավազային-ավազակավային գրունտ, խճի -մանրախճի հետ, մշակման խումբը՝

§33^{ց} (աղ.1-1) III կարգ

5.11. Ջրագիծ թիվ 11 (W_{11})

Ջրագծի երկարությունը 45.0 մետր է: Ջրագիծը անցնում է հետևյալ գրունտներով՝

ՆԿ 0+00 – ՆԿ 0+45

0,0-2,5 Խճամանրախճային գրունտ ավազակավային լցոնով, մշակման խումբը՝

50%--§6 г (աղ.1-1) IVկարգ

50%--§6д (աղ.1-1) Vկարգ

Նախագծվող ջրամատակարարման համակարգի տարածքում գրունտների գեոտեխնիկական հատկությունների նորմատիվային ցուցանիշները՝

Ավազակավեր, կավավազներ

Խտությունը՝ ρ=1,80տ/մ³

Ներքին շփման գործակիցը/անկյունը՝tgφ/φ=0,325/17°

Տեսակարար կապակցվածություն C=0.025ՄՊա

Դեֆորմացիայի մոդուլը՝E=8.0 ՄՊա

Պայմանական հաշվարկային դիմադրությունը՝R=1,8 կգու/սմ²

Ներքնակի գործակիցը՝K=0.9կգ./սմ³

Խճամանրախճային գրունտ ավազակավային լցոնով

Խտությունը՝ ρ=1,95տ/մ³

Դեֆորմացիայի մոդուլը՝E=30.0 ՄՊա

Սեղման ժամանակավոր դիմադրությունը-0.3ՄՊա

Ներքնակի գործակիցը՝K=2,0կգ./սմ³

Բազալտներ

Խտությունը՝ ρ=2,60տ/մ³

Դեֆորմացիայի մոդուլը՝E=50000.0 ՄՊա

Սեղման ժամանակավոր դիմադրությունը-80.0ՄՊա

Ներքնակի գործակիցը՝K=40,0կգ./սմ³

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Կատարված դաշտային և կամերալ աշխատանքների հիման վրա կարելի է անել հետևյալ եզրահանգումները՝

1. Տեղամասերը ինժեներա-երկրաբանական պայմանների տեսանկյունից պիտանի են նախատեսվող ջրագծերի տեղադրման համար:

2. Նախագծվող ջրագծերը անցնելու են ավազակավային, կավավազային, խճամանրախճային, բազալտների գրունտային միջավայրով, որոնց գեոտեխնիկական հատկությունների նորմատիվային ցուցանիշները բերված են սույն եզրակացության մեջ:

3. Ջրագծերի անցկացման ժամանակ որպես հետլիցքի գրունտներ կարող է օգտագործվել տեղում հանված ավազակավային, կավավազային, գրունտները, Խճամանրախճային գրունտները ավազակավային լցոնով: Գրունտի լցոնի խոնավությունը անհրաժեշտ է հասցնել օպտիմալ խոնավությանը՝ W_{opt}: Անհրաժեշտ է որոշել ավազա-կավավազային լցոնով խճա-մանրախճային գրունտի առավելագույն կմախքի խտությունը՝ρd_{max}: Հետլիցքի գրունտները տեղադրել վիբրոտոփանիչի միջոցով 10սմ հաստության գրունտը տոփանելուց հետո, ապահովելով՝ $\rho d > 0{,}95\ \rho d_{max}$ պայմանով:

4. ՀՀՇՆ 2020թ.սեյսմիկ նորմերի համաձայն համաձայն Լեռնանիստբնակավայրը գտնվում է սեյսմիկ երկրորդ գոտում (a=0,4g), տեղամասի գրունտային պայմաններն ըստ սեյսմիկ հատկությունների գնահատվում են որպես 2-րդ կարգի, որին համապատասխանում է 0,4g (K0=1,0) սպասվող գրունտի հորիզոնական արագացման առավելագույն արժեքը: Վերջնականապես գրունտի հորիզոնական արագացման առավելագույն արժեքի համար կստացվի $a_{max}=0{,}4g$

5.Ուսումնասիրվող տարածքում գրունտային ջրերը ընկած են 5.0 մետրից մեծ խորության վրա:

6.Ուսումնասիրվող տարածքում վտանգավոր երկրաբանական երևույթները բացակայում են:

Ինժեներ-երկրաբան ,

երկ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Ս.Հայրոյան

Բաց ատրական մաս

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱՑԱՏՐԱԳԻՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հրազդանի համայնքապետարանի պատվերով, *№ ԿՄՀՔ-ՀԲԽՄՇՁԲ-25/43* պայմանագրի շրջանակներում, ՋԻՆՋ ՍՊԸ–ի կողմից մշակվել է “ՀՀ Կոտայքի մարզի Հրազդան համայնքի Լեռնանիստ բնակավայրի խմելու ջրամատակարարման համակարգի բարելավման” աշխատանքային նախագիծը (հետագայում ԱՆ):

Լեռնանիստ բնակավայրը գտնվում է գտնվում է Մենակասր լեռան հյուսիսային կանաչապատ ու ծաղկաշատ լանջին: Մարզկենտրոն Հրազդան քաղաքից գտնվում է 5 կմ հարավ-արևելք:

Լեռնանիստ գյուղը հիմնադրվել է 1828 թվականին: Նախկինում կոչվել է Վերին Ախտա, 1978 թվականի հունվարի 25-ին վերանվանվել է Լեռնանիստ:

Համաձայն Հայաստանի վարչական բաժանման՝ Լեռնանիստ բնակավայրը ներառված է Հրազդան համայնքի կազմում:

Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ և բանջարաբոստանային կուլտուրաների մշակությամբ:



Ընդհանուր տվյալներ շրջանի մասին

Լեռնանիստի տարածքի կլիման ամառ՝ զով է, քամոտ, օպտիմալ խոնավությամբ, միջին ջերմաստիճանը հուլիսին 16°C, հարաբերական խոնավությունը (ժամը 15-ին)՝ 45-60%, քամու միջին արագությունը՝ 3.0-6.0 մ/վ:

Ձմեռ՝ շատ ցուրտ, քամոտ, խոնավ, միջին ջերմաստիճանը հունվարին՝ մինուս 5°C-ից մինչև մինուս 12°C, հարաբերական խոնավությունը (ժամը 15-ին)՝ 70% և ավելի, քամու միջին արագությունը՝ 5.0-7.0 մ/վ

Ձյան բարձրությունը՝ 132սմ:

Սառեցման առավելագույն խորությունը՝ 92սմ:

Համաձայն ՀՀ տարածքի սեյսմիկ գոտիավորման սխեմատիկ քարտեզի ուսումասիրվող շրջանը պատկանում է 2-րդ գոտուն:

ԱՆ-ի մշակման համար հիմք է հանդիսացել պայմանագրին կից տեխնիկական առաջադրանքը, ՏԻՄ-ի ներկայացուցիչների հետ տեղում իրականացված ուսումնասիրությունները և քննարկումները, կատարված չափագրումները, ինչպես նաև Ճարտարապետահատակագծային առաջադրանքը:

Լեռնանիստ բնակավայրում կենտրոնացված ջրամատակարարման համակարգը բացակայում է:

Սույն ԱՆ-ի հիմնական նպատակն է բնակավայրերի ջրամատակարարման համակարգի բարելավումը, այդ թվում, բնակչությանը անվտանգ՝ ՀՀ-ում գործող նորմերի պահանջներին համապատասխան խմելու ջրով ապահովումը:

ԱՆ-ի սույն փաթեթը ներառում է աշխատանքային 5 գրքեր, այդ թվում՝

Գիրք 1 - Ընդհանուր դրույթներ և Աշխատանքային գծագրեր

Գիրք 2 - Շինարարական աշխատանքների կազմակերպում

Գիրք 3.1 - Աշխատանքային ծավալներ
Ծավալաթերթ-նախահաշիվ

Գիրք 3.2 - Աշխատանքային ծավալներ
Մրցութային ծ*ավալաթերթ*

Գիրք 4 - Նախահաշիվներ

Ընդհանուր դրույթներ և Աշխատանքային գծագրեր - Գիրք I.1-ով ներկայացված են ԱՆ-ի համար հիմք հանդիսացող բոլոր փաստաթղթերը, մասնագիտական եզրակացությունները, ԱՆ-ի բացատրագիրը, ինչպես նաև ջրամատակարարման համակարգի բարելավմանն ուղված աշխատանքների տեխնոլոգիական և շինարարական աշխատանքային գծագրերը (հատակագծեր, կտրվածքներ, հանգույցներ, մասնագրեր), որոնք ներկայացված են երկու առանձին բաժիններով:

Շինարարական աշխատանքների կազմակերպում - Գիրք 2-ով ներկայացված են աշխատանքների կազմակերպման տեխնոլոգիական հիմնական պրոցեսների

նկարագրությունը, առաջարկվող շինարարական մեքենաների, սարքերի և սարքավորումների ցանկը, ըստ պահանջվող քանակի, առաջարկվող աշխատակազմի ցանկը, սարքերի և սարքավորումների տեխնիկական պահանջների վերաբերյալ ծանոթությունները, բնապահպանական, սոցիալական կառավարման պլանը:

Աշխատանքային ծավալների (Ծավալաթերթ-նախահաշիվ) – Գիրք 3.1-ով ներկայացված են ԱՆ-ի աշխատանքային ծավալները և միավոր գները, ներառյալ բոլոր անուղղակի ծախսերը, բացի ԱԱՀ-ից, որը կիրառված է ծավալաթերթ-նախահաշվի վերջում:

Աշխատանքային ծավալների (Մրցութային ծավալաթերթ) – Գիրք 3.2-ը նույն ծավալաթերթ-նախահաշիվն է առանց աշխատանքային ծավալների միավոր գների, որում նշված է յուրաքանչյուր գլխի կշիռը (%) ընդհանուր նախահաշվային արժեքի նկատմամբ:

Նախահաշիվներ – Գիրք 4-ով ներկայացված են աշխատանքային ծավալների մանրամասն նախահաշիվները:

Լեռնանիստ բնակավայրի գոյություն ունեցող ջրամատակարարման համակարգի համառոտ նկարագիրը

Ինչպես արդեն վերը նշվեց, Լեռնանիստ բնակավայրում կենտրոնացված ջրամատակարարման համակարգը բացակայում է: Հրազդանի համայնքապետարանի պատվերով 2022թ-ին մշակվել է Լեռնանիստ բնակավայրի խմելու ջրամատակարարման համակարգի կառուցման աշխատանքային նախագիծ, որի հիման վրա իրականացվել է շինարարական աշխատանքներ: Ջրամատակարարման համար որպես ջրաղբյուր նախատեսվել է գյուղի արևելյան մասում՝ 1944.0մ բացարձակ բարձրության նիշում կառուցվող խորքային հորը: Կառուցվող խորքային հորից ջուրը նախատեսվել է մղել գյուղից դեպի հարավ-արևմուտք՝ 1980.0մ բացարձակ բարձրության նիշում գտնվող 530մ3 ծավալով օրվա կարգավորման ջրամբար (ՕԿՋ): ՕԿՋ-ն նույնպես նախատեսվել է մասնակի վերանորոգման աշխատանքներ: Նախկին ԱՆ-ով նախատեսվել է նաև բաշխիչ ցանցի կառուցում, մոտ 21.0կմ, 225-50մմ պոլիէթիլենե խողովակներով: Մասնավոր տների մուտքագծերի և քլորակայանի կառուցում նախկին ԱՆ-ով չի նախատեսվել:

Կառուցված խորքային հորը ցանկապատված է 16.5x10.0մ չափերով մետաղական ցանկապատով, իսկ հորի վրա տնակ նախատեսված չէ:

Ինչպես արդեն վերը նշել ենք, գոյություն ունեցող ՕԿՋ-ում իրականացվել են մասնակի վերանորոգման աշխատանքներ: Դեպի ՕԿՋ տրման և ՕԿՋ-ից դուրս եկող խողովակների և ՕԿՋ-ի պատի հանգույցի ջրամեկուսացման աշխատանքները իրականացված են թերություններով, իսկ չոր խուցը գտնվում է կիսակառույց և քայքայված վիճակում: ՕԿՋ-ի թմբապատումը և սան. գոտու ցանկապատը իրականացված են մասնակի:

Նոր կառուցված բաշխիչ ցանցը իրականացված է ինչպես օղակային, այնպես էլ փակուղային գծերից:

Բնակավայրի վարչական ղեկավարի տեղեկացմամբ, կառուցված բաշխիչ ցանցի ճնշումային փորձարկման աշխատանքներ չեն իրականացվել: Հիմնականում փակուղային գծերի վերջնամասերը դուրս են բերված գրունտից, որոնց մի մասը խցափակված են, իսկ մի մասը գտնվում են բաց վիճակում:

Բաշխիչ ցանցում բացակայում են ճնշման կարգավորիչ և հակահիդրեհային հիդրանտների հորերը: Ինչպես արդեն վերը նշել ենք, մասնավոր տների մուտքագծերի կառուցման աշխատանքներ չեն նախատեսվել:

Լեռնանիստ բնակավայրի խմելու ջրապահանջի և պաշարապահ ծավալների հաշվարկներ

Բնակավայրի ջրապահանջի հաշվարկման համար հիմք է հանդիսացել Համայնքապետարանից ստացված բնակչության թվաքանակը, որի վրա հաշվարկվել է նաև բնակավայրերի բնակչության հեռանկարային զարգացումը (մինչև 2045թ.):

Տարեկան բնակչության աճի ցուցանիշի համար հիմք է ընդունվել հանրապետության վերջին տարիների բնակչության տարեկան միջին աճը, որը կազմում է 0.6%: Բնակավայրի բնակչության թիվը 0.6% աճով մինչև 2045թ.-ը բերված է ստորև աղյուսակ 1-ում

Աղյուսակ 1

Բնակավայր	Բնակչության թիվը 2025թ-ին	Բնակչության թիվը 2045թ-ին
Գյուղ Լեռնանիստ	3230	3641

- Բնակավայրի միջին օրական ջրապահանջը հաշվարկված է հետևյալ բանաձևով՝

$$Q_{\text{միջ.օր}} = \frac{N \cdot q_n}{1000},\ \text{մ}^3/\text{օր},$$

որտեղ՝ N – տվյալ բնակավայրի բնակչության հաշվարկային թիվն է, որը բերված է աղյուսակ 1-ում

qn - ջրապահանջի միջին օրական նորմն է, որը հաշվի է առնում նաև ընտանի կենդանիների ջրապահանջը և հնարավոր կորուստների մակարդակը:

- Միջին օրվա միջին ժամային ջրապահանջը որոշվում է՝

$$Q^{\text{միջ.ժամ}}_{\text{միջ.օր}} = \frac{N \cdot q_n}{1000} = \frac{N \cdot q_n}{86400},\ \text{լ/վրկ},$$

- Առավելագույն ջրապահանջի օրվա միջին ժամային ելքերը հաշվարկվում են հետևյալ բանաձևով ՝

